Հրեական պատգամաւորութիւնը պէտք է ներկայանայ թագաւոր Կայզերին։ Ա. այժմ լրագրերից տեղեկանում են որ բարձ Գիրբուրը ներկայացաւ Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչին։ Նորին Կայսերական Բարձրութիւնը յայտնել է բարձ Գիրբուրին որ Տարատային Ռուսաստանի անմարդաբնակ հրեաների դէմ լեն ծագում ժողովրդի փանտախուռութիւնից, այլ գրգռած են եղել չարագործներով։ Նորին Բարձրութիւնը ասելացրել է, որ կառավարութիւնը բոլոր միջոցներ է գործ դրել անկարգութիւնների վերջ դնելու համար։

—

Թիֆլիսի Ներսիսեան դպրոցում սկսեցան հարցաքննութիւններ Բարձր դասատուն այսպէսների հնութիւնների հայոց լեզուի մէջ չատ անբաւականացուցիչ են եղեալ։ Հարցաքննութիւնների մասին «Մշակը» յայտ ունի աւելի մանրամասնաբար խօսելու։

—

Լսում ենք որ պ. Աբսէն Թոխմախեան, որ նորերումս ճանապարհորդել է Թիւրքաց Հայաստանի մէջ և այժմ Թիֆլիս է վերադարձել, այս օրերս դիտաւորութիւն ունի իր ճանապարհորդութեան մասին մի հրապարակական դասախօսութիւն կարդալու։ Հայերէն լեզուով։ Դասախօսութիւնը լինելու է Աղծրունու թատրոնում։

—

«Русскій Курьеръ» լրագիրը արտատպելով իր 124 համարում «Մշակի» թիֆլիսցուութիւնը վանից, հետեւեալն է ասում իր առաջնորդ յօդուածի մէջ այդ թերթաւորման առիթով։ «Հայոց «Մշակ» լրագրից արտատպված վանի թիֆլիսցուութիւնը ներկայացուցիչ է Թիւրքաց Հայաստանի իրական դրութիւնը ամենաճիշտ գոյներով, որ և տակի է տալիս մեզ յայտնել այն եռեռգրութիւնը, որ զուգի ամենամամ ապագայում հայոց խնդրին վերաբերած է առաջին դեր խաղալ Թիւրքաց կայսերութեան ներքին դրութեան վերաբերեալ մեր հարցերի հարցաւորի փորձը ցոյց է տուել որ Թիւրքահպատակ ազգերը չեն կարող հանել իրանց դրութեան իրական բարւոքման մի ուրիշ միջոցով, բայց զինված ապստամբութեան կամ ծանր գոնաբերութիւններ։ Եթէ մի օր Թիւրքաց Հայաստանում խռովութիւններ պատահեն, Թիւրքիայի համար դժուար կը լինի զսպել այդ խռովութիւնները, նոսա այդ նոսանալի հեռատեսութեան պատճառով, երկրորդ՝ որովհետև Թիւրքական հարկաւոր են իր զօրքերը Ալբանիայի և Մակեդոնիայի մէջ և նոյնպէս Ցուռնաստանի սահմանների վրա կարգը պահպանելու համար»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

Լոնդոնից գրում են հետեւեալը։ Համայնքների ժողովի մէջ պէտք է քննիչէր պարլամենտական երդման խնդիրը, բայց ընդհանրական կուսակցութեան անդամներից մէջը առաջարկեց յետաձգել այդ հարցի քննութիւնը։ Քուէարկութեան ժամանակ այս առաջարկութիւնը մերժվեցաւ 202 ձայների մեծամասնութեամբ 182 դէմ կանգնութիւնը այդ փոքրամասնութիւնը բաւական նշանաւոր համարեց և համաձայնեց պարլամենտական երդման հարցը յետաձգել, պահելով իրաւունք այդ հարցին վերադառնալ անմեկնաբար ժամանակաւոր միջոցի ընթացքում։ Բրեյլը, տեսնելով, որ իր մասնակցութիւնը պարլամենտ դեռաեռ յետաձգված է անորոշ ժամանակով, վճռեց թողել իր զգուշութիւնը, որ նա խոսացել էր պահպանել, յուսալով իր գործի պատ վիճակ վրա։ Ժողովի դեռաեռ բացման ժամանակ նա մոռեցաւ սպիտիրին և պահանջեց թոյլատրեցին երդվել այս ձևով, որ Համայնատեսանում է նրա համոյնունդներին ժողովի մէջ այս անգամ էլ այն անկարգութիւններից մէջը պատահեց, որ տեղի էր ունեցել ամեն անգամ երեքշաբաթի այդպիսի վարմունքի պատճառով։ Կըրեվիան կուսակցութեան անդամներից մէջը առաջարկեց բոլորովին արգելել Բրեդլօին ներքին գանվել պարլամենտի դեռատերին, մինչև անգամ իրրև հասարակ այցելու, եւ թէ նա պաշտանակս չի պարտաւորվի էնդը մնալ։ Այդ առաջարկութիւնը ընդունվեցաւ, բայց և Բրեդլօ բոլոր միջոցներ գործ է դնում, որպէս զի սոնալ պարլամենտին վերջացնել իր գործը։ Նա ապեց լրագիրների մէջ ժողովրդին ուղղված մի ազդարարութիւն, որով նա պահանջում է պարլամենտի բանութիւնը իր դէմ։

Անգլիական պարլամենտները ընդունեցին Բիլիոնդիլդին արձան կանգնեցնելու առաջարկութիւնը։ Համայնքների ժողովի մէջ, որտեղ կարծում էին, թէ շատերը կընդդիմադրեն այդ առաջարկութեանը, նա ընդունվեցաւ 380 ձայների մեծամասնութեամբ 54-ի դէմ։ Նոյն ժողովի մէջ կառավարութիւնը հարց առաջարկվեցաւ Տունների ջրերը Թիւրքաց Նաւատորմ ուղարկելու և այդ քարշին Գրանտայի կողմից ընդդիմանալու մասին։ Զարլէյ Դիլկ յայտնեց, որ կառավարութիւնը դրա մասին ոչինչ յայտնի չէ։ Բայց մինիստրի օգնականը այդպիսի գործը անկարելի չէ համարում, թէպէտ նա կարծում է, որ գործը պատերազմի պատճառ չի դառնայ։

Լորդերի ժողովի պահպանողական անդամները մանանոր ժողովի ժամանակ գոբբ Միշենդ յայտնեց, որ նա չէ ցանկանում առաջնորդել պահպանողականներին Շրաֆտբրեյցու։ Նոյնպէս և լորդ Կինան Ա.Յնուհետև այդ երկուսն էլ առաջարկեցին Սալիսբուրիին, որ և ընդունվեցաւ պահպանողականների առաջնորդ։

ՖՐԱՆՍԱԻԱ

Լրագիրները հաղորդում են հետեւեալը։ Դիպլոմատիական արշաւանքը Ցունիսի մէջ աւելի շատ վերջացաւ, քան թէ պատերազմանքը։ Գրանսական զօրքերի ներմոյուտեան ապրելու տեղ չը յուսալով Թիւրքիայի և եւրոպական պետութիւնների օգնութեան վրա, Ցունիսի բէյը ընդունեց նրան առաջարկած պայմանները և ճանաչեց Գրանսիայի գերիշխանութիւնը։ Գենեռալ Բրէար, որի զօրաբաժինը բէյի մոլբաքարտի մեռ էր գանվում, աւելի ընդունական դիպլոմատ յայտնվեցաւ, քան թէ հիւսպատս բանտան և գլխատրպակս այն պատճառով, որ պատերազմանի ցոյերը այդպիսի դէպքերում աւելի մեծ ազդեցութիւն են ունենում քան թէ դիպլոմատական գրութիւնները և դատողութիւնները։

Արշաւանքը աջողութեամբ վերջացաւ առանց մեծ արիւնհեղութեան, առանց պատերազմական փայլուն գործերի և մինչև անգամ առանց կրուվիրերին պատուհելու։ Թատրոնականների տեղ, որոնց հետ ապարդիւն կը լինէր պատերազմել, պատված և զսպված է ինքը Ցունիսի բէյը պատերազմական ցոյցի օգնութեամբ։ Կասկեցնում Ցունիսը իրականապես Ֆրանսիացիների իշխանութեան տակ կը լինի, որոնք, ինչպէս երևում է Բարբարիի Սենտ-Իլերի վերջին շրջաբերականից, վճռեալ են վերջնապես ամրանալ Ցունիսի մէջ, ինչպէս անդրեցիները ամրացել են Հեգիստանի մէջ։ Գրանսիական տեղապահ-Վիշիսարը կը կառավարէ երկրի բէյի հետ, որի իշխանութիւնը միայն անուանով կը լինի բէյը սահմանված կը լինի մի հասարակ միջնորդի դեր խաղալ Գրանսիական տեղապահ-միջնորդի և տեղային մահմեդական ազգաբնակչութեան մէջ։ Գրանսիայի հեղինակաութիւնը կը պահպանվի զօրքերի օգնութեամբ, որոնք մշտապէս կը մնան յայտնի տեղերում։

Արշաւանքը հասել է իր նպատակին կոդմնակի ճանապարհով առանց երկրի մի մասը Գրանսիայի հետ միացնելու, հետեւապէս առանց այն դիպուածական գժտութիւնների, որոնք հետևանք են լինում բացարձակ նուաճողական քաղաքականութեան։ Գրանսիական հանրապետութեան համար այդ գործը մեծ աջողութիւն է։ Դրանով ամրանում է Բարբարիի Սենտ-Իլերի գրութիւնը և ինքն քան ինքնան հեղգվում են տարածված լուրերը Գրանսիական արտաքին գործերի թուլութեան մասին։

Ցունիսի բէյի իշխանութեան տակ զանանվում է մահմեդականների սրբատեղիներից մէկը, երևելի կերտան, որ քիչ յայտնի է եւրոպացիներին, բայց նոյնքան յարգված է Աֆրիկայի արաբներից, որքան Ֆեց կամ Մարոկո։ Ինչպես Մեկկա և Մեդինա նոյնպես էլ կերտան մեծ քանակութեամբ ուխտաւորներ են գալիս կերտան։ Քաղաքը շրջապատված և ամրացած է մի մեծ պատով և ունի 55 մետրանոց և 62 մետրանոց կեռ-լուսանի գեղեցիկ մզկիթը կառուցված է 500 սիւների վրա, որոնք մասամբ հասարակ քարերից են շինուած և մասամբ թանգագին քարերից։ Բացի այդ կերտանը Ցունիսի առևտրի կենտրոնն է։

ԱՐՏԱՔԻՆ ԼՐԻՒԵՐ

—«Daily News» լրագրին Աֆրիկից հաղորդում են, որ թէսալիայից ստացած հատուստ տեղեկութիւնների հիման վրա, Թիւրքերը շարունակում են զինուորել, կարծես թէ անպատճառ պատերազմ պէտք է ունենան Յունաստանի հետ։ Յունական զօրքերը գնում են Խալիզայից, սինեւեան գլխաւոր բանակից դեպի սահմանները։ Սակրիդում մի առևտրական ֆիրմա պայման կապեց պարատարվելով իւրաքանչիւր օր 40,000 Թնան հաց հասցնել, պահանջին համեմատ։

—«Times» լրագրին գրում են փարիզից, որ ներքին գործերի մինիստր Կոնտան մտադիր է պատգամաւորների ժողովին առաջարկել 2.000.000 ֆրանկ օժանդակութիւն տալ, ալժիրցիներին վարձատրելու այն վնասների համար, որ զորքերը հասցրին նրանց հունձքերը ոչնչացնելով։

—«Presse» լրագրի խօսքերով գինուորական մինիստր Ֆայրը ինչ որ կարող էր անել բան արաբ բարեկամական յարաբերութիւնները պահպանելու համար Ֆրանսիական զորքի և հասարակապետութեան մէջ։ Ֆրանսիական զորքի օֆիցէրների առնիկներ ուղարկելու գաղթ հենց որ նասերը կը բացվեն, կառաջարկվի պատգամաւորների ժողովին։ Այդ բանի ծախսը 4—5 միլիոն կը կազմեն։ Բացի դրանից գինուորական մինիստրը նորերումս մէկ նոր օրէնքի նախագիծ կազմեց, որի զօրաբեռնը ոչ թէ միայն օֆիցէրների առնիկներին պէտք է ուղարկեն, այլ և անասոր-օֆիցէրների և գինուորների առնիկներին։ Այդ բոլորի համար մինիստրը պահանջում է 22 միլիոն։

ԹԱՌՆ ԼՐԻՒԵՐ

Օրերս Բօպա Բրատասան առաջին անգամ էր գալիս «Մշակ» վերնագրով մի բան և առանց իր ազգանունը գրելու։ Ձեռագիրը յանձնել էր գրասենեակապետին, իր գրասենեակի փոքրիկ մասին ոչ օրէն մի խօսք լսելով։ Բանը ոչինչ։ Հասարակութեան մէջ։ Օրերորդի մայրն էլ գնեց այդ գիրքը և մեծ զուարճութիւնի կարդաց։ Հեղինակ օրերորդը հարցրեց մորից։ «Ինչպէս ես նրանում այդ բանը»—«Շատ գեղեցիկ է, պատասխանեց մայրը։—«Գեղեցիկ տուր ինձ էլ կարդալու», ասեց օրերորդը։—«Ոչ, այս տեսակ գիրք մի օրերորդի անպարկաւ է կարդալ» պատասխանեց մայրը։—«Բայց մեզի կարելի է արգելել ինձ կարդալ այն, թէ, որ ես իմքս եմ գրել։ բարկանալեց օրերորդը։—«Ինչպէս, դու հեղինակն էս»։—«Այո, հերիք որ ես առանց քո թոյլատրեանն այդ ճանապարհն ընտրեցիր»։ Մայրը ի հարկի հերեց իր ազգնան։

* * *

Մեռ օրերս կայացաւ փարիզում հակակրօնական մի ժողով։ Ելեկտրիկ պետութիւնից բաժանելու, կենդրոնական վերցնելու և կանանց իրաւունքների վերարտադրման, ֆոդոմի փոխանակման ընտրվեցաւ մի կին։

* * *

Այս օրերս տեղի ունեցաւ հազարամեակ առաջին փորձը հեռա. Գուլզիից մինչև Կալէ և փորձը կատարեցաւ աջողեցաւ։ Խոսողների ձայնը լսեալ էր շատ հեռու կերազով։ Այդ գործերի հնարողի կարծիքով տելեֆոն կարելի է անցկացնել և Անգլիայից մինչև Նիւ-Իորկ, Ատլանտեան օվկիանոսի միջոցով։

* * *

Երեսի արտաքսուն Սարա Բէրնար այժմ ճանապարհի վրա է Ամերիկայից դեպի Եւրոպա։ Ամերիկայում իր ասած ներկայացումներից նա ստացել է գուտ արծրեաք 20.000 ֆռանս տարվանից և ինչպէս նա իր դասնանեներում գրում է այժմ իր կարծիքը բոլորովին փոխել է Ամերիկայի վերաբերմամբ։ Սարա Բէրնար զարմացած է եղել տեսնելով այնքան հարգանք, մեծ, գեղեցիկ շինված քաղաքներ և ճանապարհ հասնելու, գոլոնտնեաց ամերիկացիներին, կարծես, ասում է նա, բոլոր ամերիկացիք մէկ առանձին մշտաշարժ մեքենայ լինեն։ Դա ինքն էլ վարակվելով նրանց հանգամով, այժմ ուսումնասիրում է ամերիկեան լեզու, պատգամաւորներ ունենալով հանդես գուրս գալ Անգլիայում շեկսպիրի դերերում։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԼՈՆԴՈՆ, 11 մայիսի։ Համայնքների ժողովի մէջ Դիլկ ասեց թէ հենց որ կը ընացվի հրամանների վերաբերեալ ռուսաց օրէնքների ձիրկ պատճէն, բրիտանական կառավարութիւնը կը խորհի արդեօք կարող է նա մի քայլ անել, որպէս զի աջողեցնի ռուս այդ օրէնքների փոփոխութիւնը։

ԴՈՒԲԼԻՆ, 11 մայիսի։ Իրլանդական կալուսանական լիգայի քարտուղար Բրէնոնայ կալանաւորված է։ Նա մեղադրվում է բանակիչներին բանութեան դրդելու մէջ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 մայիսի։ Թագաւոր կայսրին երկի ներկայացած հրեական պատգամաւորութիւնը բարձ Գիրբուրգի առաջնորդութեամբ, որոնցմէ կիրայով ընդունվեցաւ Թագաւորից, որ բարեհաճեց ասել թէ հարաւում կատարված յանցաւոր անկարգութիւնների գործում հրեան միայն ասրեի է անարիսաների ձեռքում։ Ա.Յնուհետև հեղինակաւոր Կարանի Թեմի գրութիւնը պատգամաւորութիւնը։ Երկի ուղեւորվեց դեպի Մոսկվա Մեծ Իշխան կոնստանտին Նիկոլայեվիչ իր ամուսնու հետ Պիսկ քաղաքի ամենալաւ մասը ոչնչացված է հրդեհներ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 մայիսի։ Պետական բանկի 5% տոմսերը առաջին շրջանի արժէ 96 բ. 75 կ., երկրորդ 94 բ. երրորդ 94 բ. 25 կ., չորրորդ 94 բ., հինգերեան 5% առաջին փոխառութեան տոմսարը արժէ 224 բ. 50 կ., երկրորդ 217 բ. արեւելեան առաջին փոխառութեան տոմսարը արժէ 93 բ., երկրորդ 93 բ., երրորդ 93 բ., ոսկի 8 բ. 8 կ։ Ռուսաց 1 բաբլ Լոնդոնի վրա արժէ 24,31 պէնս, Ամստերդամի վրա 123,25 պէնս, ռուսաց 100 բ. Համբուրգի վրա արժէ 207 մարկ, Փարիզի վրա արժէ 256 ֆրանկ 37 սանտիմ։ Բարսայի արտադրութիւնը ամուր է։

Խմբագիր—Տպագրող ԴԻՒԴԻՈ ԱՐՇԱՐՈՒՆԻ